ՀԱՅ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄՆ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԵՎ ՎՐԱՑԱԿԱՆ ԽՍՀ-ՆԵՐՈՒՄ (1920–30-ական թվականներ)

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Անդրկովկասի խորհրդայնացումից (1920–1921 թթ.) կարճ ժամանակ անց՝ 1922 թ. դեկտեմբերին, տարածաշրջանի երեք հանրապետություններից կազմավորվեց մեկ միասնական հանրապետություն՝ Անդրկովկասի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետությունը՝ ԱԽՖՍՀ-ն, որը մտավ նոր ձևավորված ԽՍՀՄ կազմի մեջ: ՀԽՍՀ-ին հարևան ԱԽՖՍՀ մյուս երկու հանրապետությունների տարածքը դեռևս հազարամյակներ առաջ էր հայաբնակ, իսկ այդ տարածքների մի մասը ժամանակին կազմում էին հայկական պետության տերիտորիալ առանձին միավորներ: Վրացական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ մի շարք գավառներ (Ջավախք, Լեռնային Ղարաբաղ, Նախիջևան) ու դրանց բնակչությունը հայկական էր, որոնք, դառնալով քաղաքական, կուսակցական, պետական շահերի զոհ, բռնակցվել և հայտնվել էին ՀԽՍՀ-ին հարևան հանրապետությունների կազմում: Դեռևս ցարական Ռուսաստանի կազմում գտնված ժամանակ Անդրկովկասի տնտեսական և քաղաքական խոշոր կենտրոններում հայ ազգաբնակչությունը գերակշռում էր ոչ միայն իր թվաքանակով, այլև զբաղեցնում էր ամուր դիրքեր քաղաքական, տնտեսական, առևտրական, կրթական-գիտական և այլ ոլորտներում: Պատահական չէ, որ անգամ մուսավաթականների՝ 1918 թ. Բաքվում իրականացրած հայկական ահավոր սպանդից հետո տեղի հայ բնակչությունը դեռևս 1920-ական թվականներին իր թվաքանակով գերազանցում էր Երևանի հայությանը, իսկ Թիֆլիսն իր 100 հազարից ավելի հայությամբ ոչ միայն Անդրկովկասի, այլ ամբողջ ԽՍՀՄ-ում ամենամեծաթիվ հայ բնակչություն ունեցող քաղաքն էր: Ուստի, խիստ կարևոր և առանձնակի հետաքրքիր է Ադրբեջանական ԽՍՀ և Վրացական ԽՍՀ հայ ազգաբնակչության թվաքանակի, նրա աճի դինամիկայի, տեղաբաշխման, լեզվական պատկանելության, գրագիտության և այլ գործընթացների դիտարկումն ու ուսումնասիրությունը:

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԽՍՀ

1920-ական թվականներին Ադրբեջանական ԽՍՀ հայ ազգաբնակչության վերաբերյալ թվական և այլ տվյալներ արձանագրվել են նախ 1923 թ. ԽՍՀՄ քաղաքային մարդահամարով (ի դեպ, Վրացական ԽՍՀ-ում այն չի անցկացվել): Այսպես, այս մարդահամարով Ադրբեջանական ԽՍՀ քաղաքաբնակ հայության թիվը կազմում էր 77.002 մարդ, որոնցից 39.478-ը արական, 37.524-ը՝ իգական

սեռի: Անշուշտ, Ադրբեջանական ԽՍՀ քաղաքային հայ բնակչության գերակշիռ մասը բնակվում էր հենց Բաքվում, որի վերաբերյալ վիճակագրական տվյալներն ավելի ամփոփ են հաջորդ մարդահամարների ժամանակ: 1923 թ. մարդահամարով վեր հանված Ադրբեջանական ԽՍՀ քաղաքային հայ բնակչության 36,7 %-ը (28.265 մարդ) ներկայացնում էր բնակչության ինքնագործ խումբը, այսինքն՝ նրանց, ովքեր ունեին գոյատևման միջոց, աղբյուր (աշխատավարձ, եկամուտ): Այս ցուցանիշն ավելի բարձր էր արական սեռի շրջանում, որը կազմում էր 59,3 % և անհամեմատ ցածր՝ իգական սեռի շրջանում՝ 12,9 %: Ավելի ընդգրկուն վիճակագրական արդյունքներ են վերհանված 1926 թ. դեկտեմբերի 17-ի ԽՍՀՄ համամիութենական մարդահամարում: Այս մարդահամարով վերջնականապես ճշգրտվում է 1920-ական թվականներին Ադրբեջանական ԽՍՀ հայ ազգաբնակչության թիվը, տեղաբաշխումն ու այլ գործընթացներ, ուր ընդգրկված էր թե՛ քաղաքային, թե՛ գյուղական բնակչությունը:

Հայերն Ադրբեջանական ԽՍՀ-ում
ըստ 1926 թ. դեկտեմբերի 17-ի մարդահամարի[1]

	Ամբողջը	Արական	Իգական	Մայրենի լեզու				Գրագետ	Գրագետ ազգ. լեզվ.
				հայ.	ռուս.	թուրք	այլ		
Ադրբեջանական ԽՍՀ, որից՝	282.004	144.877	137.127	276.223	4039	239	1503	93.739	84.312
1. ԼՂԻՄ	111.694	56.225	55.469	111.624	55	8	7	25.792	25.703
2. Նախիջևանի ԻԽՍՀ	11.276	5643	5633	11223	16	15	22	3757	3705
3. ք. Բաքու (արդյունաբերական-գործարանային շրջանի հետ)	76.656	39.904	36.752	72.569	3806	37	244	40.408	32.318
4. ք. Գանձակ Գյանջա)	16.148	8218	7930	15.930	83	11	124	7067	6721

Ադրբեջանական ԽՍՀ հայ ազգաբնակչությունը 1926 թ., ըստ մարդահամարի տվյալների, կազմում էր հանրապետության ամբողջ բնակչության 12,4 %-ը: Քաղաքային հայ բնակչությունը կազմում էր 103.280 մարդ կամ հանրապետությունում բնակվող հայության 36,6 %-ը: Բաքվում (արդյունագործական-գործարանային շրջանի հետ) էր կենտրոնացած ադրբեջանահայության 27,1 %-ը, իսկ Գանձակում՝ 5,7 %-ը: Բաքու քաղաքում բնակվող հայությունը տեղաբաշխված էր քաղաքի 10 շրջաններում, որոնցից առավել հոծ հայ բնակչություն ունեին Բաքվի ութերորդ շրջանը՝ 24.584 հայ, իններորդը՝ 13.247, յոթերորդը՝ 13.199 հայ: Բավականին բարձր էր ադրբեջանահայության մեջ հայերենին տիրապետողների թիվը, որոնք այն համարում էին իրենց մայրենի լեզուն, նրանց տոկոսային կշիռը կազմում էր 97,9%, իսկ 1,4%-ի համար մայրենին ռուսերենն էր:

[1] Всесоюзная перепись населения 1926 г., Т. XIV.– Закавказская Социалистическая Федеративная Советская Республика, Азербайджанская ССР. М., 1929, с. 12.

Գրագետ էր հանրապետությունում բնակվող հայության 33,2 %-ը, իսկ վերջիններիս 89,9 %-ը տիրապետում էր նաև իր ազգային լեզվին: Բաքու քաղաքում այս ցուցանիշը կազմում էր, համապատասխանաբար, 52,7 % և 79,9 %: Ադրբեջանական ԽՍՀ գյուղական հայության շրջանում գրագիտության աստիճանն ընդամենը 22,9 % էր, որի 98,7 %-ը տիրապետում էր նաև հայերենին: Ի տարբերություն միութենական մյուս հանրապետություններում բնակվող հայության, Ադրբեջանական ԽՍՀ հայության գերակշիռ մասը՝ 63,4 %-ը, գյուղաբնակ էր և ցրված հանրապետության բոլոր գավառներում անխտիր, ուստիև նպատակահարմար է դրանց դիտարկումն առանձին-առանձին: Այսպես.

1. Գանձակի (առանց քաղաքի) գավառի հայ ազգաբնակչությունն իր թվաքանակով ամենամեծն էր Ադրբեջանական ԽՍՀ գավառների մեջ, ուր բնակվում էին 41.861 հայ, որոնցից 40.895-ը գյուղաբնակներ էին: Գավառի մյուս 2 քաղաքները՝ Ելենենդորֆն ու Շամխորը, նույնպես հայաբնակ էին, ընդ որում դրանց հայ բնակչությունը մի քանի անգամ գերազանցում էր տեղի թուրք (ադրբեջանցի) ազգաբնակչությանը: Գավառի գյուղական շրջաններից Աղջաքենդիում (8.975 հայ կամ 91,8 %), Բայանում (12.409 հայ կամ 99,7 %), Սլավյանովկայում (8.396 հայ կամ 75,5 %), Չայքենդում (6.413 հայ կամ 76,5 %) հայ ազգաբնակչությունը գերակշռում էր իր թվաքանակով, զգալի թիվ էր կազմում Ելենենդորֆում՝ 3.017 մարդ կամ շրջանի բնակչության 43,4 %: Գանձակի գավառի գյուղական մյուս շրջաններում ևս առկա էր հայ ազգաբնակչություն, որը մի քանի տասնյակից մի քանի հարյուր մարդ էր:

2. Բաքվի գավառում (առանց Բաքու քաղաքի) ևս մեծաթիվ հայ ազգաբնակչություն կար: Հայերի թիվն այստեղ հասնում էր 7.541 մարդու: Գյուղական շրջաններում էին բնակվում ընդամենը 429 մարդ: Գավառի հայ ազգաբնակչությունը գլխավորապես կենտրոնացած էր արդյունագործական-գործարանային շրջանում (7.112 մարդ): «Արդյունագործական-գործարանային շրջանում բնակվող հայությունը կենտրոնացած էր Լենին-Սուրխաթական շրջանում՝ 4.792 մարդ, Բիբի Էյբաթում՝ 1.928 մարդ, Բինիգադում՝ 392 մարդ»[2]:

3. Շամախի գավառում հայության թիվը 6.485 մարդ էր, որոնցից 6.293-ը բնակվում էին գյուղական շրջաններում, մասնավորաբար, Բասխալում՝ 1.789 մարդ, Մատրասիում՝ 4.447 մարդ, ինչը կազմում էր շրջանի բնակչության 45,8 %-ը:

4. Նուխիի գավառի 4.007 հայ բնակիչներից Նուխի քաղաքում էին բնակվում 1.565 մարդ, իսկ հայության մյուս մասը ցրված էր գավառի գյուղական շրջաններում՝ Վարդաշենում՝ 1.336 հայ, Նիջում՝ 571, Կուտկաշենում 133 և այլն:

5. Ղազախի գավառի հայ ազգաբնակչության թիվը 3.632 մարդ էր, որոնցից 2.020-ը բնակվում էին Ձևգամի գյուղական շրջանում: Հայաբնակ էին նաև գավառի քաղաքային բնակավայրերը՝ Ղազախում՝ 414, Թովուզում՝ 404, Աղստևում (Աղստաֆա)՝ 171:

---

[2] Итоги всесоюзной переписи населения 1926 г. по г. Баку и Промыслово-заводскому району. Т. 1, М., 1929, с. 42.

6. Գեոկչայի գավառի հայ բնակչության թիվը 3.154 մարդ էր, որոնցից 2.907-ը բնակվում էին գյուղական շրջաններում. Կարամարյանում՝ 1.553 մարդ, Սուրախանում 776 մարդ: Հայաբնակ էին գավառի քաղաքներն ու գյուղական մյուս շրջանները ևս:

7. Աղդամի գավառում բնակվող 2.525 հայերից 1.917 մարդ բնակվում էր Թարթառ (Տերտեր) քաղաքում և համանուն շրջանի գյուղական վայրերում: Հայաբնակ էին նաև Եվլախ, Աղդամ քաղաքներն ու Բարդայի գյուղական շրջանը (250 հայ):

8. Զաքաթալայի գավառի հայ ազգաբնակչության թիվը 1.399 մարդ էր, որոնց գերակշիռ մասը բնակվում էր Զաքաթալա քաղաքում և կազմում էր 1.181 մարդ կամ քաղաքի բնակչության 35,7 %-ը: Գավառի հայության փոքր մասն էլ ցրված էր գյուղական շրջաններում:

9. Ղուբա գավառի 894 հայազգի բնակիչներից 591-ը բնակվում էին Դիվիչի գյուղական շրջանում, իսկ մնացյալը ցրված էր գավառի՝ թե՛ քաղաքային, թե՛ գյուղական վայրերում:

10. Ջեբրայիլի գավառի 625 հայ բնակիչների կեսից ավելին՝ 383 մարդ, բնակվում էր Կարյագինո (Սարդար) քաղաքում և նրա համանուն գյուղական շրջանում: Հայաբնակ էին նաև գավառի Հորադիզ, Ջեբրայիլ, Զանգելան և Խանլիխ գյուղական շրջանները:

11. Քուրդիստան գավառի 373 հայ բնակիչների հիմնական մասը բնակվում էր Մուրադխանլի և Ղուբաթլու գյուղական շրջաններում, իսկ Լաչինում հայերի թիվը 66 մարդ էր (քաղաքի բնակչությունը 435 մարդ էր):

12. Լենքորանի գավառի 511 հայ բնակիչներից 216-ը բնակվում էր Լենքորան քաղաքում: Հայերը գլխավորապես կենտրոնացած էին գավառի գյուղական շրջաններից Պրիշիբում (202 մարդ):

13. Սալյանի գավառը, ուր բնակվում էին 335 հայ, ամենափոքրն էր հայ բնակիչների իր թվաքանակով: Գավառի հայությունը ոչ ստվար, բնակվում էր թե՛ քաղաքային, թե՛ գյուղական բնակավայրերում[3]:

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԻԽՍՀ

Ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ գտնվող Նախիջևանի ԻԽՍՀ-ում բնակվում էր 11.276 հայ: 1926 թ. դրությամբ Նախիջևանի ԻԽՍՀ-ն ուներ 3 քաղաք, բաժանված էր 8 գյուղական շրջանների, որոնցում անխտիր առկա էր հայ ազգաբնակչություն: Նախիջևան քաղաքում բնակվում էր 1065 հայ, որը կազմում էր քաղաքի բնակչության 10,3 %-ը, իսկ Օրդուբադում՝ 77 հայ: Ջուղա (Ջուլֆա) քաղաքի հայ ազգաբնակչությունը՝ 293 մարդ, իր թվաքանակով գերազանցում էր տեղի թուրք բնակչությանը: Նախիջևանի ԻԽՍՀ Փառակա գյուղական շրջանում հայ ազգաբնակչության թիվը հասնում էր 2.789 մարդու և կազմում էր ամբողջ շրջանի բնակչության 60,8 %-ը: Հայ բնակչության թվաքանակով երկրորդը Նարիմանովկայի շրջանն էր, ուր բնակվում էին 2.004 հայեր, ապա Տումբուլի շրջանը՝

[3] Азербайджанская ССР. Всесоюзная перепись населения 1926 г. Т. XIV, с. 60-77.

1.529 հայերով: Կիվրախի գյուղական շրջանում բնակվում էին 1.079 հայեր, Աբրակունիսում՝ 876, Ջուղայում՝ 848, Բաշ–Նորաշենում՝ 455 և Օրդուբադում՝ 261: Նախիջևանի ԻԽՍՀ գյուղական շրջանների հայության ընդհանուր թիվը 9.841 մարդ էր, իսկ քաղաքային բնակչության թիվը՝ 1.435: Նախիջևանի ԻԽՍՀ հայ բնակչության 99,5 %-ի համար հայերենը մայրենի լեզու էր: Գրագետ էր Նախիջևանի ԻԽՍՀ հայության 33,3 %-ը, որոնց ճնշող մեծամասնությունը տիրապետում էր նաև իր ազգային լեզվին[4]*:*

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶ (ԼՂԻՄ)

1923 թ. կազմավորված ԼՂԻՄ-ն ուներ 2 քաղաք և 5 գյուղական շրջաններ, ընդամենը 125.159 բնակիչներով, որոնց 89,2 %-ը (111.694 մարդ) հայեր էին, 10 %-ը թուրքեր (12.592 մարդ): ԼՂԻՄ քաղաքներում բնակվում էին 2.817 հայեր, որոնցից Ստեփանակերտում՝ 2.724: Ղարաբաղի և Հարավային Կովկասի հայկական խոշոր կենտրոն Շուշիում Ադրբեջանի մուսավաթական կառավարության իրականացրած ջարդերի և հայաթափության արդյունքում վերացվել էր քաղաքի գերակշիռ մասը կազմող հայ բնակչությունը (*մնացել էին ընդամենը 93 հայ*)*: Շուշիի շրջանի գյուղերում ևս իրավիճակը նույնն էր՝ ամբողջ շրջանում բնակվում էին ընդամենը 8 հայեր: Շուշի քաղաքն ու համանուն շրջանը դարձել էին գրեթե հայաթափ, ինչը Բաքվի իշխանությունների հակահայ քաղաքականության արտահայտությունն էր: Շուշի քաղաքը և համանուն շրջանը բնակեցված էին 9.220 թուրքերով (ԼՂԻՄ թուրք բնակչության 73,2 %), որոնք արհեստականորեն ձևավորված ադրբեջանական Քուրդիստանի հետ մեկտեղ նպատակ էին հետապնդում թուլացնելու Ղարաբաղի կապը Հայկական ԽՍՀ հետ: Լեռնային Ղարաբաղի ԻՄ գյուղական շրջաններում բնակվում էին 108.877 հայ և ընդամենը 7.349 թուրք բնակիչներ: Այսպես.*

1. Վարանդայի շրջան՝ 28.190 հայ, 650 թուրք

2. Ջրաբերդի շրջան՝ 29.292 հայ, 1.914 թուրք

3. Խաչենի շրջան՝ 26.702 հայ, 22 թուրք

4. Դիզակի շրջան՝ 24.685 հայ, 443 թուրք

5. Շուշիի շրջան՝ 8 հայ, 4.320 թուրք:

Լեռնային Ղարաբաղի ԻՄ հայ ազգաբնակչության 99,9 %-ի համար մայրենի լեզու էր իր ազգային լեզուն՝ հայերենը: Գրագետ էր ԼՂԻՄ հայ բնակչության 23 %-ը, որոնք, գրեթե ամբողջությամբ, տիրապետում էին նաև իրենց ազգային լեզվին[5]*:*

1926 թ. մարդահամարը վեր է հանել նաև Ադրբեջանական ԽՍՀ-ում բնակվող, սակայն օտարահպատակ հայ ազգաբնակչության թիվը, որը կազմում էր 2.387 մարդ՝ գլխավորապես կենտրոնացած Բաքու քաղաքում (2.107 մարդ)[6]*:*

---

[4] *Նույն տեղում, էջ 77-78:*

[5] *Նույն տեղում, էջ 79:*

[6] ЗЦСУ (Закавказское центральное статистическое управление). Население Закавказья. Всесоюзная перепись населения 1926 г. Краткие итоги. Тифлис, 1928, с. 9.

1930-ական թվականներին Ադրբեջանական ԽՍՀ հայ ազգաբնակչության թիվը շարունակական աճ է դրսևորել, ինչն ակնհայտ երևում է 30-ական թվականներին ԽՍՀՄ-ում անցկացված մարդահամարների վիճակագրական տվյալներից: Այսպես, թեև 1937 թ. մարդահամարի արդյունքների չեղյալ հայտարարմանը, այնուհանդերձ, արձանագրվեց Ադրբեջանական ԽՍՀ հայ ազգաբնակչության ընդհանուր թիվը՝ բացահայտելով անցած ավելի քան 10 տարիների հայության աճի դինամիկան: Ըստ 1937 թ. մարդահամարի, Ադրբեջանական ԽՍՀ հայության թիվը կազմում էր 370.164 մարդ, որը, 1926 թ. մարդահամարի տվյալների հետ համեմատած, արձանագրել է հայության թվի աճ 88.160 մարդով:

Ավելի ընդհանուր, սակայն ճշգրտված ու վերջնական տվյալներ Ադրբեջանական ԽՍՀ հայ ազգաբնակչության թվի վերաբերյալ վերհանված են 1939 թ. Համամիութենական մարդահամարով, որը վերջինն էր 1930-ական թվականներին:

Հայերն Ադրբեջանական ԽՍՀ-ում ըստ 1939 թ. հունվարի 17-ի մարդահամարի[7]

	Ամբողջը	*Բնակչության մեջ %-ներով*	*Քաղաքաբնակ*	*Գյուղաբնակ*
Ադրբեջանական ԽՍՀ	*388.025*	*12,1*	*171.101*	*216.924*
1. ԼՂԻՄ	*132.800*	*88*	*10.555*	*122.245*
2. Նախիջևանի ԻԽՍՀ	*13.350*	*10,5*	*3016*	*10.334*
3. ք. Բաքու	*118.703*	*14,7*	*118.703*	*–*

Այս մարդահամարի տվյալներով, Ադրբեջանական ԽՍՀ քաղաքաբնակ հայության տոկոսային կշիռն աճել և կազմում էր 44 %, իսկ միայն Բաքու քաղաքում բնակվում էր ադրբեջանահայության 30,5 %-ը: Քաղաքային հայ բնակչության շրջանում, 1926 թ. տվյալների համեմատ, կտրուկ աճ է առկա թե՛ ԼՂԻՄ-ում, թե՛ Նախիջևանի ԻԽՍՀ-ում. աճել է նաև գյուղական հայ բնակչության թիվը 21,3 %-ով (38.200 մարդով): ԼՂԻՄ-ի հայ ազգաբնակչության թիվն աճել էր 18,8 %-ով (21.106 մարդով), որն այնքան էլ բարձր ցուցանիշ չէր, եթե նկատի ենք առնում, որ Բաքվի հայության թիվը նույն ժամանակահատվածում աճել էր 42.047 մարդով (54,8 %-ով): Բաքվի հայ ազգաբնակչության թվի կտրուկ աճը մեծ մասով պայմանավորված էր գյուղական շրջաններից հայության արտահոսքով: Այսպիսով, 1920–30-ական թվականներին Ադրբեջանական ԽՍՀ-ն ԽՍՀՄ-ում հայության բնակության խոշորագույն և կարևոր կենտրոններից մեկն էր:

ՎՐԱՑԱԿԱՆ ԽՍՀ

[7] Всесоюзная перепись населения 1939 г. Основные итоги. М., 1992, с. 71.

Վրացական ԽՍՀ-ն միութենական հանրապետություններից (ՀԽՍՀ-ից հետո) ամենահայաբնակն էր, ուր կենտրոնացած էր ուժեղ, կազմակերպված հայություն և առկա էր ավանդական հայկական միջավայր: Վիրահայությունը մշտապես ազդեցիկ էր ոչ միայն իր մեծաթվությամբ, այլ նաև իր ունեցած կշռով թե՛ վրաց հասարակության, թե՛ վրացական պետականության պատմության մեջ: Վրաստանի հայության կշիռն ու դերակատարումը մեծ էր նաև XIX–XX դդ. սկզբին, երբ Թիֆլիսը Կովկասյան փոխարքայության կենտրոնն էր: Վրաստանի անկախության կարճատև ընթացքից հետո (1918–21 թթ.) Թիֆլիսը կրկին ստանձնում է Անդրկովկասի կենտրոնի իր դերակատարումը, այս անգամ որպես ԱԽՖՍՀ մայրաքաղաք:

1920-ական թվականների Վրացական ԽՍՀ հայ ազգաբնակչության թվի, տեղաբաշխման, լեզվական պատկանելության և մյուս գործընթացների վերաբերյալ վիճակագրական տվյալներ են առկա միայն 1926 թ. դեկտեմբերի 17-ի մարդահամարով:

Հայերը Վրացական ԽՍՀ-ում ըստ 1926 թ. դեկտեմբերի 17-ի մարդահամարի[8]

	Ամբողջը	Արական	Իգական	Մայրենի լեզու				Գրագետ	Գրագետ ազգ. լեզվ
				հայ.	վրաց.	ռուս.	այլ		
Վրացական ԽՍՀ	307.018	155.628	151.390	224.552	73.917	5298	3251	118.406	80.727
1. ք. Թիֆլիս	100.148	48.983	51.165	80.321	14.949	4690	188	55.451	40.896
2. Աբխազական ԽՍՀ, որից՝	25.677	13.477	12.200	25.519	15	115	28	8649	8173
քաղաքաբնակ	2673	1394	1279	2541	14	110	8	1557	1193
գյուղաբնակ	23.004	12.083	10.921	22.978	1	5	20	7092	6980
3. Աջարստանի ԻԽՍՀ, որից՝	10.476	5343	5133	10.145	140	165	26	4241	3354
քաղաքաբնակ	10.253	5213	5040	9931	138	160	24	4169	3297
գյուղաբնակ	223	130	93	214	2	5	2	72	57
4. Հարավ-Օսական ԻՄ, որից՝	1374	660	714	126	1231	7	10	839	132
քաղաքաբնակ	827	394	433	101	719	6	1	533	92
գյուղաբնակ	547	266	281	25	512	1	9	306	40

Վրացական ԽՍՀ-ում բնակվող հայության 48,7 %-ը քաղաքաբնակներ էին, որի մոտ 70 %-ը բնակվում էր Թիֆլիս քաղաքում: Թիֆլիսի հայության 80,2 %-ի համար մայրենի լեզու էր հայերենը, 14,9 %-ի համար՝ վրացերենը, և միայն 4,6 %-ի համար՝ ռուսերենը: Գրագետ էր Թիֆլիսի հայության 55,3 %-ը, իսկ վերջին-

[8] Всесоюзная перепись населения 1926 г. Т. XIV. ССР Грузии, М., 1929, с. 16.

ներիս 73,7 %-ը գրագետ էր նաև իր ազգային լեզվով: Գրագիտության մակարդակով Թիֆլիսի հայությունը, ուր կենտրոնացած էր Վրացական ԽՍՀ հայության 32,6 %-ը, նույնիսկ փոքր-ինչ գերազանցում էր նույն ժամանակաշրջանի Երևանի քաղաքային հայ բնակչությանը: Վրացական ԽՍՀ գյուղաբնակ հայության 70,3 %-ի համար հայերենը մայրենի լեզուն էր, 27,6 %-ի համար՝ վրացերենը, 1,7 %-ի համար՝ թուրքերենը: Հետաքրքրական է, որ հետևելով ազգային լեզուների տարածմանը այլ ազգերի մեջ Անդրկովկասի մասշտաբով, ապա հայերենը, բացի ազգությամբ հայերից, յուրացրել են ընդամենը 1.751 մարդ, վրացերենը, բացի վրացիներից, յուրացրել են 8.2034 մարդ, ընդ որում, նրանց հիմնական մասը կազմում էին հայերը՝ 74.061 մարդ[9]: Վրացական ԽՍՀ գյուղաբնակ հայության շրջանում անհամեմատ ցածր էր ոչ միայն մայրենի լեզվին տիրապետելու, այլ նաև գրագիտության մակարդակը: Գրագետ էր 23,9 % և սրա միայն 64,2 %-ն էր տիրապետում իր ազգային լեզվին: Վրացական ԽՍՀ վարչատարածքային տարբեր միավորներում հայ ազգաբնակչության թիվն ու այլ ցուցանիշներ տարբեր էին, խիստ հետաքրքրական է դրանց դիտարկումն առանձին- առանձին: Այսպես.

1. Թիֆլիսի գավառում (առանց Թիֆլիս քաղաքի) բնակվում էր 28.597 հայ, որը կազմում էր Վրացական ԽՍՀ ամբողջ հայության 9,3 %-ը: Գավառի հայության գերակշիռ մասը՝ 27.949 մարդ, բնակվում էր գյուղական շրջաններում (տեմիներում), որոնցից Աղբուլաղի շրջանում՝ 4.916 մարդ, Ասուրեթում՝ 2.515, Ջեմո-Ծալկայում՝ 4.435, Աշկալայում՝ 3.291, Թելեթիում՝ 2.538, Ծղնեթիում՝ 1.318: Գյուղական այս բոլոր շրջաններում տեղի հայ ազգաբնակչությունը թվային մեծամասնություն էր կազմում: Թիֆլիսի գավառի ամբողջ հայության 58,8 %-ի համար հայերենը մայրենի լեզու էր, որը ցածր ցուցանիշ էր. այսպես, գավառի Մցխեթ քաղաքի 330 հայ բնակիչներից ոչ մեկի համար հայերենը մայրենի լեզու չէր: Հայերը կազմում էին Թիֆլիսի գավառի ամբողջ բնակչության 17,9 %-ը:

2. Ախալքալաքի գավառի հայ ազգաբնակչությունը 57.791 մարդ էր, որը կազմում էր Վրացական ԽՍՀ ամբողջ հայության 18,8 %-ը: Գավառի գյուղական վայրերում բնակվում էին 54.633 հայեր, իսկ Ախալքալաք քաղաքի 3.475 բնակիչներից 3.158-ը հայեր էին: Ախալքալաքի գավառի բոլոր 12 գյուղական շրջաններում էլ հայ ազգաբնակչություն կար: Ստվար հայ ազգաբնակչություն ունեցող գյուղական շրջաններից էին Ախալքալաքը՝ 13.672, Բարալետին՝ 9.025 հայերով և այլն: Հայերենը մայրենի լեզու էր գավառի հայ ազգաբնակչության 95,1 %-ի համար (55.016 մարդ):

3. Ախալցխայի գավառում բնակվող հայ ազգաբնակչությունը կազմում էր 15.565 մարդ կամ հանրապետությունում բնակվող հայության ուղիղ 5 %-ը: Ախալցխա քաղաքում բնակվում էին 6.516 հայեր, որոնք կազմում էին քաղաքի բնակչության 52,8 %-ը, Աբասթումանում՝ 506 հայեր կամ քաղաքի բնակչության 40,6 %-ը: Այս քաղաքներում հայ ազգաբնակչությունն իր թվաքանակով էթնիկական խմբերի մեջ առաջինն էր: Գյուղաբնակ էին գավառի 8.543 հայ բնակիչ.

[9] ЗЦСУ. Население Закавказья. Всесоюзная перепись населения 1926 г. Краткие итоги, с. 8.

նրանք մեծամասնություն էին կազմում Վալեի գյուղական շրջանում՝ 5.858 հայ, որոնք շրջանի բնակչության 55,5 %-ն էին: Ստվար հայ ազգաբնակչություն ունեին նաև Ախալցխայի շրջանը՝ 1253 հայ և Ասպինձայինը՝ 1.166 հայ: Հայերենը մայրենի լեզու էր գավառի հայ ազգաբնակչության 99,6 %-ի համար: Հայերը կազմում էին Ախալցխայի գավառի ամբողջ բնակչության 16 %-ը:

4. Գորիի գավառում բնակվում էր 25.341 հայ, որը կազմում էր Վրացական ԽՍՀ հայության 8,2 %-ը: Հայաբնակ էին գավառի բոլոր քաղաքներն անխտիր. Գորիում՝ 2.395 հայ և քաղաքի բնակչության 22,7 %-ը, Բորժոմիում՝ 1.057 հայ, Սուրամում՝ 1.135 հայ, Խաշուրիում՝ 522 հայ և այլն: Գյուղաբնակ էր գավառի հայության ճնշող մեծամասնությունը՝ 20.144 մարդ, որոնցից Գորիի շրջանում՝ 5.550 հայ, Ծիթելի-Քալաքիում՝ 3.827 հայ, Կավտիսխևիում՝ 1451 հայ, Տղվիավիում՝ 1.097 հայ, Մեջվրիսխևիում՝ 1.106 հայ, Բակուրիանիում՝ 927 հայ (վերջինում հայերը տոկոսային հարաբերությամբ ամենաշատն էին): Գավառում ցածր էր հայերենին՝ որպես մայրենի լեզու, տիրապետողների տոկոսային կշիռը, որը կազմում էր ընդամենը 12,7 %: Հայերը Գորիի գավառի ամբողջ բնակչության 12,2 %-ն էին:

5. Բորչալուի գավառում բնակվում էր 14.969 հայ՝ Վրացական ԽՍՀ-ում բնակվող հայության 4,8 %-ը: Գավառի Շահումյան քաղաքում բնակվում էր 5.474 հայ՝ քաղաքի բնակչության 97,9 %-ը, իսկ Լյուքսեմբուրգում՝ 826 հայ: Գյուղական շրջաններում բնակվում էր 8669 հայ: Գյուղական հայ բնակչությունն իր թվով ամենամեծն էր Բոլնիս-Խաչենի շրջանում՝ 1.731 հայ և Օպրետի՝ 1.466 հայ: Ստվարաթիվ էին Դումանիսի՝ 1.431 հայ և Սադախլոյի՝ 1.846 հայ, գյուղական շրջանները: Սադախլոյի շրջանում հայ ազգաբնակչության տոկոսային կշիռը 39,5 % էր: Հայերենն իր մայրենի լեզուն էր համարում գավառի հայության 90 %-ը: Հայերը կազմում էին Բորչալուի գավառի ամբողջ բնակչության 17,2 %-ը:

6. Սղնախի գավառում բնակվում էր 12.181 հայ՝ Վրացական ԽՍՀ-ում բնակվող հայության 3,9 %-ը: Հայ ազգաբնակչությունն ամենամեծն էր իր թվով Սղնախում, ուր բնակվում էին 2.400 հայեր (քաղաքի բնակչության 49,4 %-ը) և Վելիսցիխեում, ուր բնակվում էր 3.559 հայ (քաղաքի բնակչության 59,9 %): Լագոդեխի քաղաքում բնակվում էին 666 հայեր, ինչը կազմում էր քաղաքի բնակչության 42,5 %-ը: Գավառի գյուղաբնակ հայերի թիվը 5.556 մարդ էր, որոնք կենտրոնացած էին Կանդաուրա (675 հայ), Գուրջաանի (622 հայ), Կակաբեթի (885 հայ), Ծիթելի-Ծղարո (344 հայ), Ախալշենի (310 հայ) և գյուղական մյուս բոլոր շրջաններում: Հայերն իրենց թվով գերազանցում էին Ալազանի ջրանցքի հողային տարածքներում, ուր նրանց թիվը կազմում էր 541 մարդ: Հայերենը մայրենի լեզու էր գավառի հայության 25,6 %-ի համար: Հայերը կազմում էին Սղնախի գավառի ամբողջ բնակչության 7,7 %-ը:

7. Թելավի գավառում բնակվում էր 9135 հայ՝ Վրացական ԽՍՀ-ում բնակվող հայության 2,9 %-ը: Հայ ազգաբնակչությունը զգալի թիվ էր կազմում Թելավ քաղաքում, ուր նրանց թիվը 3.606 մարդ էր և կազմում էր քաղաքի ամբողջ բնակչության 37,1 %-ը: Գյուղական շրջաններում էին բնակվում 5.529 հայեր, որոնցից

Շուշիանիում՝ 1.131, Մատանիում՝ 861, Իկալտոյում՝ 857, Նապարեուլիում՝ 605, Զեմո-Խոդաշենիում՝ 587 հայեր: Հայաբնակ էին գավառի մյուս բոլոր շրջանները նույնպես: Հայերենը մայրենի լեզու էր գավառի հայության 11,5 %-ի համար: Հայերը կազմում էին Թելավի գավառի ամբողջ բնակչության 8,6 %-ը:

8. Դուշեթի գավառում բնակվում էին 2.577 հայեր, որոնցից 377-ը բնակվում էին Դուշեթում՝ կազմելով քաղաքի բնակչության 17,9 %-ը: Գավառի հայ ազգաբնակչությունը հիմնականում կենտրոնացած էր Մուխրանի գյուղական շրջանում, ուր բնակվում էին 1699 հայեր՝ կազմելով շրջանի բնակչության 19,5 %-ը: Հայերենը մայրենի լեզու էր գավառում բնակվող հայության 5,5 %-ի համար, ինչը խիստ ցածր ցուցանիշ էր: Հայերը կազմում էին Դուշեթի գավառի բնակչության 4 %-ը:

9. Շորապանի գավառում բնակվում էին 1.215 հայեր, որոնք գլխավորապես կենտրոնացած էին գավառի քաղաքներում՝ Չխարիում՝ 535 հայ, Սաճխերեում՝ 447 հայ և այլ բնակավայրերում: Հայերենը մայրենի լեզու էր գավառում բնակվող հայության 12,8 %-ի համար:

10. Քութայիս գավառում բնակվում էր 1.022 հայ, որոնք նույնպես կենտրոնացած էին գավառի քաղաքներում՝ Քութայիսում՝ 830 հայ, Սամտրեդիում՝ 112 հայ, իսկ մյուսները ցրված են գավառի այլ բնակավայրերում: Հայերենը մայրենի լեզու էր գավառի հայության 43,8 %-ի համար, ինչը բավական բարձր ցուցանիշ էր Արևմտյան Վրաստանի հայաբնակ մյուս գավառների համեմատությամբ:

11. Ռաճայի գավառում բնակվում էին 231 հայեր՝ գլխավորապես կենտրոնացած վարչական կենտրոն Օնիում, ուր նրանց թիվը 229 մարդ էր և կազմում էր քաղաքի բնակչության 7,8%-ը:

12. Օզուրգեթի գավառի 110 հայ բնակիչների ուղիղ կեսը բնակվում էր Օզուրգեթ քաղաքում, իսկ մնացածը ցրված էր տարբեր բնակավայրերում:

13. Լեչխումի գավառի 143 հայ բնակիչների մեծ մասը՝ 114 մարդ, բնակվում էր Լահիլաշի գյուղական շրջանում:

14. Սենակի գավառի 119 հայ բնակիչների մոտ կեսը բնակվում էր Սենակի քաղաքում, իսկ մնացածը՝ տարբեր բնակավայրերում:

15. Փոթիի շրջանում բնակվող 280 հայերից 279-ը կենտրոնացած էր վարչական կենտրոն Փոթիում[10]:

1926 թ. դեկտեմբերի 17-ի մարդահամարով թվական տվյալներ առկա չեն միայն Զուգդիդի և Վերին Սվանեթի գավառների հայ ազգաբնակչության վերաբերյալ: Վրացական ԽՍՀ կազմում գտնվող ինքնավար վարչատարածքային միավորներում ստվար հայ ազգաբնակչության առկայությունն անհրաժեշտ է դարձնում այն դիտարկել առանձին:

[10] Всесоюзная перепись населения 1926 г. Т. XIV, ССР Грузии, с. 84–99.

ԱԲԽԱԶԱԿԱՆ ԽՍՀ

Աբխազական ԽՍՀ-ում բնակվող 25.677 հայերը կազմում էին Վրացական ԽՍՀ-ում բնակվող հայության 8,3 %-ը և սփռված էին վարչատարածքային բոլոր 5 միավորներում՝ Սուխումի, Գուդաութայի, Գագրայի, Կոդորի և Գալիի գավառներում: Աբխազական ԽՍՀ-ում բնակվող հայության 89,5 %-ը գյուղաբնակ էր, իսկ գյուղական առանձին բնակավայրեր, գրեթե ամբողջությամբ, հայաբնակ էին: Այստեղ բնակվող հայության 99,3 %-ի համար հայերենը մայրենի լեզու էր, ինչը բացառիկ բարձր ցուցանիշ էր: Գրագիտության մակարդակով Աբխազական ԽՍՀ հայ ազգաբնակչությունն ուներ միջին ցուցանիշ, որը կազմում էր 33,6 %, իսկ դրա 94,4 %-ը տիրապետում էր նաև իր ազգային լեզվին:

1. Սուխումի գավառում բնակվում էր Աբխազական ԽՍՀ հայության գերակշիռ մասը՝ 14.388 մարդ, իսկ Սուխում քաղաքում՝ 2.023 մարդ, որոնք քաղաքի բնակչության 9,3 %-ն էին: Գավառի հայության հիմնական մասը՝ 12.365 մարդ, տեղաբաշխված էր գյուղական բնակավայրերում: Սուխումի գավառի հայ ազգաբնակչությունը կազմում էր գավառի ամբողջ բնակչության 18,6 %-ը և իր թվով էթնիկական խմբերի մեջ երկրորդն էր՝ զիջելով միայն մեգրելներին (ընդամենը 351 մարդով): Սուխումի գավառի 20 գյուղական համայնքներից միայն երեքում առկա չէր հայ ազգաբնակչություն, իսկ մնացածներում հայերի թիվը մի քանի տասնյակից հասնում էր մի քանի հազարի: Այսպես՝ հայ ազգաբնակչությունն ամենամեծն էր իր թվով Ծեբելդայում՝ 2.932, Գումիստայում՝ 1.821, Գուլրիպշում՝ 1.828, Էշերիում՝ 1.606, Ազանտիում՝ 349 և Լաթայում՝ 682 մարդ: Ստվար հայ ազգաբնակչություն կար Դրանդիում՝ 691, Մերխեուլիում՝ 604, Բեշկարդաշում՝ 417 և այլ գյուղական համայնքներում (գյուղխորհուրդներում): Հետաքրքրական է, որ Սուխումի գավառի գյուղական ամբողջ բնակչության մեջ հայերն ամենաշատն էին իրենց թվաքանակով, իսկ հայերենը մայրենի լեզու էր գավառի 15.553 բնակչի համար, այսինքն՝ բացի հայերից նաև էթնիկական այլ խմբերի ներկայացուցիչների համար:

2. Գուդաութայի գավառի հայ ազգաբնակչության թիվը 5.784 մարդ էր, որոնցից 259-ը բնակվում էին Գուդաութա քաղաքում, իսկ մյուսները՝ գյուղական վայրերում: Գավառի 21 գյուղական համայնքներից չորսում հայ ազգաբնակչությունն ամենամեծն էր իր թվով: Դրանք էին. Հայկական Անուխվան՝ 1.127, Կավակլուկը՝ 1.834, Մցարան՝ 1.128, Փսիրցխան՝ 947 հայ բնակիչներով: Աբխազական Անուխվայում բնակվում էին 326 հայ բնակիչներ: Հայերենը մայրենի լեզու էր գավառի 5.982 բնակիչների, այդ թվում՝ էթնիկական այլ խմբերի ներկայացուցիչների համար: Հայերը կազմում էին Գուդաութայի գավառի բնակչության 18,7 %-ը:

3. Գագրայի գավառում բնակվում էին 2.559 հայեր, որոնք կազմում էին գավառի ամբողջ բնակչության 25,7 %-ը և ամենամեծն էին էթնիկական խմբերի մեջ: Գագրայում բնակվում էին 337 հայեր, իսկ մնացյալը սփռված էին գավառի բոլոր 5 գյուղերում: Հայերն իրենց թվով ամենամեծն էին նաև գավառի գյուղա-

կան բնակչության շրջանում: Այսպես, հայերը մեծամասնություն էին կազմում Ալախաձեում՝ 734 մարդ և Խոլոդնայա Ռեչկա գյուղական համայնքում՝ 499 մարդ: Ստվար հայ բնակչություն կար նաև Կալդախվարայում՝ 521, Կոլխիդայում՝ 404 և Նոր Գագրայում՝ 64 հայ: Հայերենը մայրենի լեզու էր գավառի 2677 բնակչի, այդ թվում՝ էթնիկական այլ խմբերի ներկայացուցիչների համար:

4. Կոդորի գավառում բնակվում էր 2.920 հայ՝ գավառի ողջ բնակչության 8,8 %-ը: Գավառի հայությունը գլխավորապես կենտրոնացած էր 5 գյուղխորհուրդներում, որոնցից Հայկական Աթարայում՝ 1.338 մարդ և Լաբրայում՝ 793 մարդ, ուր և մեծամասնություն էին կազմում: Գյուղական հայ ազգաբնակչություն կար նաև Աբխազական Աթարայում՝ 508, Աձվիբջայում՝ 113 և Տամիշիում 111 մարդ: Հայերենը մայրենի լեզու էր գավառի 2.921 բնակչի համար:

5. Գալիի գավառն ամենափոքրաթիվ հայ բնակչություն ունեցող տարածքային միավորն էր Աբխազական ԽՍՀ-ում: Այստեղ հայերի թիվն ընդամենը 26 մարդ էր, որոնք ցաքուցրիվ բնակվում էին գավառի գյուղական տարբեր համայնքներում[11]:

Այսպիսով, Աբխազական ԽՍՀ հայ ազգաբնակչությունը ոչ միայն մեծաթիվ էր, այլ նաև որոշ գավառների էթնիկական խմբերի մեջ առաջինն էր իր թվով, բնակվում էր սերտ և ամբողջությամբ տիրապետում իր ազգային լեզվին:

ԱՋԱՐՍՏԱՆԻ ԻԽՍՀ

Աջարստանի ԻԽՍՀ-ում բնակվող 10.476 հայերը կազմում էին Վրացական ԽՍՀ ամբողջ հայության 3,4 %-ը: Ի տարբերություն Աբխազական ԽՍՀ հայ ազգաբնակչության, այստեղ հայության 97,8 %-ը քաղաքաբնակ էր, և, հիմնականում, կենտրոնացած Բաթում քաղաքում՝ կազմելով քաղաքի բնակչության 21,1 %-ը (10.233 հայ): Հայերենը մայրենի լեզու էր Աջարստանի ԻԽՍՀ հայ ազգաբնակչության 96,8 %-ի համար: Գրագետ էր հայության 40,4 %-ը, իսկ վերջիններիս 79 %-ը գրագետ էր նաև իր ազգային լեզվով: Գյուղական փոքրաթիվ հայությունը հիմնականում բնակվում էր Օրթա-Բաթումի գյուղական շրջանում, ուր նրանց թիվը 138 մարդ էր: Քոբուլեթ, Խուլո, Աջարիս-Ցխալսկի, Կեդի գավառներում միասին բնակվում էին ընդամենը 96 հայեր: 1926 թ. մարդահամարը արտացոլել է նաև Աջարստանի ԻԽՍՀ-ում բնակվող 625 հեմշինների (համշենահայեր) թիվը, որոնց հիմնական մասը՝ 540 մարդ, բնակվում էր Բաթում գավառի Հոնիո (Գոնիո) գյուղական շրջանում[12]:

ՀԱՐԱՎ-ՕՍԱԿԱՆ ԻՄ

Հարավ-Օսական ԻՄ-ում բնակվող 1.374 հայերը կենտրոնացած էին Ցխինվալի քաղաքում և Ախալգորիի գյուղական շրջանում: Ցխինվալիում բնակվող 877 քաղաքաբնակ հայերը կազմում էին քաղաքի ողջ բնակչության 15 %-ը, բայց

---

[11] *Նույն տեղում, էջ 100–103:*

[12] *Նույն տեղում, էջ 104–105:*

հայերենը մայրենի լեզու էր նրանցից ընդամենը 101-ի համար: Ախալգորի շրջանում բնակվող 504 հայ գյուղաբնակները կազմում էին շրջանի բնակչության 6,4 %-ը, իսկ նրանցից հայերենը մայրենի լեզու էր համարում միայն 1 %-ը: Հարավ - Օսական ԻՄ-ում հայերենին՝ որպես մայրենի լեզվի, տիրապետում էր հայության ընդամենը 9,1 %-ը, որը ամենացածր ցուցանիշներից մեկն էր ամբողջ Վրացական ԽՍՀ-ում: Հայ ազգաբնակչության ճնշող մեծամասնության՝ 89,5 %-ի համար մայրենի լեզու էր վրացերենը: Գրագետ էր ինքնավար մարզի հայության 61 %-ը, որոնց միայն 15,7 %-ն էր տիրաապետում իր ազգային լեզվին[13]*:*

1926 թ. մարդահամարը վեր է հանել նաև Վրացական ԽՍՀ-ում բնակվող, սակայն օտարահպատակ հայության (պարսկահպատակ և թուրքահպատակ) թվի և տեղաբաշխման վերաբերյալ հետաքրքիր տվյալներ: Այսպես, Վրացական ԽՍՀ-ում բնակվում էին 3.872 օտարերկրյա հայ քաղաքացիներ, որոնց գերակշիռ մասը՝ 2.323 մարդ, բնակվում էր Աբխազական ԽՍՀ-ում, 918-ը՝ Թիֆլիսում, 343-ը՝ Աջարստանի ԻԽՍՀ-ում և այլն: Այսպիսով, ոչ միայն 1920-ական, այլև 30-ական թվականներին Վրացական ԽՍՀ-ում բնակվող հայությունն ամենամեծն էր իր թվով (ՀԽՍՀ-ից հետո) միութենական հանրապետությունների մեջ:

1937 թ. մարդահամարն արձանագրեց Վրացական ԽՍՀ-ում հայ ազգաբնակչության թվի շարունակական աճ, որը կազմում էր 395.796 մարդ և ավելի էր 1926 թ. տվյալներից 88.778 մարդով կամ 28,9 %-ով: 30-ական թվականներին Վրացական ԽՍՀ հայ ազգաբնակչության թվի և տեղաբաշխման վերաբերյալ ավելի ընդգրկուն ու ամփոփ տվյալներ են գրանցվել 1939 թ. մարդահամարով:

Հայերը Վրացական ԽՍՀ-ում ըստ 1939 թ. հունվարի 17-ի մարդահամարի[14]

	Ամբողջը	*Բնակչության մեջ %-ներով*	*Քաղաքաբնակ*	*Գյուղաբնակ*
Վրացական ԽՍՀ	*415.013*	*11,7*	*196.784*	*218.229*
1. ք. Թբիլիսի	*137.331*	*26,4*	*137.331*	*–*
2. Աբխազական ԻԽՍՀ	*49.705*	*15,9*	*66.07*	*43.098*
3. Աջարական ԻԽՍՀ[15]	*14.085*	*7,0*	*12.159*	*1926*

1939 թ. մարդահամարով Վրացական ԽՍՀ հայ ազգաբնակչության 47,4 %-ը բնակվում էր քաղաքներում, իսկ միայն Թբիլիսիում՝ Վրացական ԽՍՀ ամբողջ հայության 33 %-ը: Կտրուկ աճել էր Աբխազական ԻԽՍՀ հայության թիվը, որը 1926 թ. համեմատ ավելացել էր գրեթե կրկնակի, սակայն այստեղ գյուղական հայության թիվը շարունակում էր մնալ գերակշռող: Հայ ազգաբնակ-

---

[13] *Նույն տեղում, էջ 105:*

[14] Всесоюзная перепись населения 1939 г. Основные итоги, с. 71.

[15] *1939 թ. մարդահամարի տվյալներում Աջարստանի ԻԽՍՀ անվան փոխարեն կիրառվում է Աջարական ԻԽՍՀ (տե՛ս* Всесоюзная перепись населения 1939 г.):

չության թիվն աճել էր նաև Աջարական ԻԽՍՀ-ում, որը կազմում էր 34,4 %, սակայն հայերը հիմնականում բնակվում էին Բաթում քաղաքում:

1920–30-ական թվականներին ԽՍՀՄ-ում անցկացված մարդահամարներով ճշգրտվեցին երկու աշխարհամարտերի միջև ընկած ժամանակահատվածում հայության արևելյան հատվածի իրական թվակազմը, աճի դինամիկան, տեղաբաշխման շրջանները և այլն: Արդեն, 1939 թ. մարդահամարով, ամբողջ ԽՍՀՄ-ում բնակվում էին 2.152.860 հայեր, որոնք ԽՍՀՄ էթնիկական խմբերի մեջ իրենց թվով գրավում էին 10-րդ տեղը և կազմում էին Խորհրդային Միության ողջ բնակչության 1,26 %-ը: Այս մարդահամարով միայն Հայկական ԽՍՀ-ում բնակվում էր 1.061.997 հայ, այսինքն՝ ԽՍՀՄ ամբողջ հայ ազգաբնակչության ընդամենը 49,3 %-ը, իսկ միութենական մյուս հանրապետություններում միասին՝ 1.090.863 հայ կամ 50,6 %-ը (որից Ադրբեջանական և Վրացական ԽՍՀ-ներում միասին՝ 803.038 հայ):

Այսպիսով, դեռևս 1939 թվականին, ԽՍՀՄ հայության կեսից ավելին բնակվում էր Հայկական ԽՍՀ սահմաններից դուրս՝ առանց բացառության միութենական բոլոր հանրապետություններում: 1939 թ. մարդահամարը վերջինն էր 30-ական թվականներին ու նախապատերազմական շրջանում, որի ավարտից հետո ամբողջ ԽՍՀՄ-ում, նրա առանձին հանրապետությունների էթնիկական ու ազգային խմբերի մեջ տեղ գտան ժողովրդագրական լուրջ փոփոխություններ: Միութենական հանրապետությունների հայ ազգաբնակչությունն աճեց նաև հետպատերազմյան շրջանում և գործուն մասնակցություն ունեցավ այդ հանրապետությունների պետական, տնտեսական, գիտամշակութային կյանքի բոլոր ոլորտներում:

РАСПРЕДЕЛЕНИЕ АРМЯНСКОГО НАСЕЛЕНИЯ В АЗЕРБАЙДЖАНСКОЙ ССР И ГРУЗИНСКОЙ ССР
(1920-30-е годы)

ОГАНЕС АЛЕКСАНЯН

Р е з ю м е

В начале XX в. армянское население Закавказья проживало во всех уголках региона и занимало прочные позиции в политико-экономической, культурной и других сферах. После установления советской власти армянское население закавказских республик достаточно динамично росло, а территория их распределения расширилась. Динамику роста армянского населения, ареал его распределения по языковой принадлежности и грамотности можно проследить с помощью проведенных в 1920–30-е годы (15 марта 1923 г., 17 декабря 1926 г., 6 января 1937 г., 17 января 1939 г.) переписей населения в СССР. Нужно подчеркнуть, что кроме Армянской ССР, армянское население в большом количестве и компактно проживало именно в закавказских союзных республиках: в Азербайджане и Грузии. Отметим, что по данным Всесоюзной переписи населения 1939 г. (пос-

ледняя перепись 1930-х годов) в Грузинской ССР проживало 415013 армян, в Азербайджанской ССР – 388025. Всего в Азербайджанской ССР и Грузинской ССР проживало 803038 армян, что составляло 73,6% всех армян, проживавших в союзных республиках (кроме Армянской ССР). Армянское население компактно проживало в Нагорном Карабахе, Нахичевани и в Джавахке, а также в столичных городах Тбилиси и Баку, где армянское население достигало более 100 тыс. человек в каждом.

DISTRIBUTION OF ARMENIAN POPULATION IN AZERBAIJANIAN SSR AND GEORGIAN SSR (the 1920-30)

HOVHANNES ALEXANYAN

S u m m a r y

At the beginning of the 20th century the Armenians of Transcaucasia were living in different corners of the region and were occupying solid positions in political, economical, cultural spheres. After the establishment of the Soviet power the Armenian population of Transcaucasian republics had dynamic growth and the territorial distribution widened. It is possible to research the dynamic growth of the Armenians, distribution of their area, linguistic belonging and literacy with the help of censuses taken in the USSR in the 1920s-1930s. It is important to mention that except Armenian SSR enormous quantity of Armenians were living in compactness in the Georgian SSR and Azerbaijanian SSR. According to All-Union census of 1939 the quantity of Armenians in Georgian SSR was 415.013 and in Azerbaijanian SSR – 388.025. Armenians were also living in compactness in Nagorno-Karabakh and Javakhk. A number of Armenians were living in Tbilisi and Baku where the quantity in each capital was more than 100. 000 people.